ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սամսոնյան,

Ներքոստորագրյալներիս՝ Գյումրու ավագանու անդամներ՝«Ապրելու Երկիր» խմբակցության ղեկավար Կարեն Մալխասյանի և ավագանու անկախ անդամ Վարդևան Հակոբյանի նախաձեռնությամբ Ձեզ ենք ներկայացնում «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձի» նախագիծ և առաջարկում ենք այն ընդգրկել համայնքի ավագանու առաջիկա նիստի օրակարգ:

Հարգանքով՝

«Ապրելու Երկիր»
խմբակցության ղեկավար — ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Գյումրու ավագանու
անկախ անդամ — ՎԱՐԴԵՎԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

07.05.2024

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով, 14-րդ հոդվածի 3-րդ մասով, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 13-րդ կետով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կատարողներ՝

Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝

ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՎԱՐԴԵՎԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ուղղված ուղերձի ընդունման մասին» որոշման հետևանքով Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ, չեն նախատեսվում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ուղերձի ընդունումը պայմանավորված է Գյումրի համայնքի Ա.Շիրակացի եվ Մ.Խորենացի փողոցների հիմնանորոգման անհրաժեշտության հանգամանքով, որի համար հիմք է հանդիսանում Գյումրի համայնքի բնակիչների 2024թվականին նախորդող տարիների եվ սույն տարվա ընթացքում բարձրաձված բազմաթիվ բողոքները և դիմումները, փողոցների անմխիթար՝ քայքայված ծածկույթ, անբարեկարգ վիճակ, երթեվեկության և հետնիոտների համար ոչ բարվոք վիճակը:

Գյումրի համայնքի Ա. Շիրակացի և Մ.Խորենացի փողոցները հանդիսանում են Մ-1 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի տարանցիկ հատված, որտեղ տրանսպորտային հոսքն ունի շատ մեծ ինտենսիվություն: Հիմնանորոգման ենթակա հատվածի երկարությունը կազմում է 2440(երկու հազար չորս հայուր քառասուն)մետր: Այն իր նշանակությամբ ունի մեծ կարևորություն, քանի որ այդ ճանապարով է ապահովվում կապը Վրաստանի Հանրապետության հետ(Բավրայի մաքսային կետ), ինչպես նաև հանրապետության Աշոցք և Ամասիա խոշորացված համայնքների հետ: Փողոցներին հարակից են բազմաթիվ բազմաբնակարան և հասարակական նշանակություն ունեցող շենքեր, անհատական տներ:

Դիտարկվող հատվածը տարիների ընթացքում ենթարկվել է փոսային նորոգումների և ներկա փուլում մասնակի վերանորոգման աշխատանքները կլինեն ոչ արդյունավետ, ինչպես նաև կունենաք գումարների ոչ արդյունավետ օգտագործում: Ներկայումս փողոցների ամբողջ երկարությամբ առկա են փոսեր և ճաքեր: Մայթերն ու եզրաքարերը գտնվում են անմխիթար վիճակում: Բետոնե եզրաքարերն ամբողջովին քայքայված են: Որոշ հատվածներում մայթերը բացակայում են:

Պետական միջոցների հաշվին 2013-2014թվականներին Շիրակացի փողոցի՝ կենտրոնական զբոսայգուց մինչև Ալեք Մանուկյան փողոց ընկած հատվածը հիմնանորոգվել է , իսկ առաջարկվող հատվածը մնացել է անբարեկարգ վիճակում: Առաջարկվող հատվածում հնարավոր է իրականացնել հիմնանորոգման աշխատանքներ քանի որ փողոցներում անցկացված է նոր ջրագիծ: Գյումրու համայնքապետարանի և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի(ՎԶԵԲ) միջև կնքված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի համաձայնագրի համաձայն կողմերը նախատեսել են իրականացնել աշխատանքներ Շիրակացի փողոցի արտաքին լուսավորության համակարգի արդիականցման

աշխատանքներ: Հիմնանորոգման արդյունքում կունենանք նաև նոր ստորգետնյա հեղեղատարներ:

Դեռևս 2022թվականի նոյեմբերին՝ Գյումրու ավագանու որոշմամբ, պայմանավորված փողոցների հիմնանորոգման հրատապությամբ, համայնքի բյուջեից հատկացրել է 15 000 000(տասնհինգ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիրակացի եվ Մ.Խորենացի փողոցների 2,4(երկու ամբողջ չորս տասնորդական) կիլոմետր հատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար, որը ձեռք է բերվել և ըստ այդ փաստաղթերի վերոնշված հատվածը հիմնանորոգելու համար անհրաժեշտ է 1,146,333,8(մեկ միլիարդ հարյուր քառասունվեց միլիոն երեք հարյուր երեսուն երեք հազար ութ) Հայաստանի Հանրապետության դրամ(հաշվարկը կատարված է 2022թվականի դրությամբ ինչը ենթադրում է, որ 2024թվականին այն կարող է ավելի շատ լինել, հաշվի առնելով շուկայում տեղի ունեցած գների փոփոխությունները):

<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձի ընդունման մասին>> որոշման ընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին հնարավոր չէ լուծել առկա խնդիրը: Խնդիրը լուծելու և ստեղծված իրավիճակը հաղթահարելու համար ակնկալում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությունը, որի արդյունքում կունենաք բարեկարգված Մ-1 միջպետական ավտոմոբիլային ճանապարհի տարանցիկ հատված, որը հնարավորություն կստեղծի նաև հետագայում համայքի բյուջեի միջոցների, սուբվենցիաների օգնությամբ հիմնանորոգել նաև Գյումրի համայնքի Ա.Շիրակացի եվ Մ.Խորենացի փողոցները հատող այլ փողոցներ:

Այս ուղերձով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության անմիջական միջամտությամբ, վերը նշված հիմնավորումներից ելնելով, ձեռնարկել քայլեր՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա. Շիրակացի եվ Մ.Խորենացի փողոցների 2,4(երկու ամբողջ չորս տասնորդական) կիլոմետր հատվածի հիմնանորոգման ուղիներ փնտրելու ուղղությամբ:

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2024 թվականի
մայիսի 16-ի N -Ա որոշման

ՈՒՂԵՐՁ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ա.Շիրակացու և Մ.Խորենացի փողոցները «Երևան-Գյումրի-Վրաստանի սահման Մ-1» միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի մաս հանդիսացող տարանցիկ հատվածներ են՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 12-ի N 256-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թվականի հոկտեմբերի 21-ի, N1729-Ն որոշման: Որպես մեկ ամբողջություն՝ իրար հաջորդող այս փողոցները Գյումրի քաղաքի կարևորագույն ճանապարհային ուղիներից մեկն են՝ տրանսպորտային հոսքերի բարձր ինտենսիվությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ դիտարկվող հատվածը տարիների ընթացքում ենթարկվել է որոշ փոսային նորոգումների՝ ճանապարհների ողջ երկարությամբ առկա փոսերն և ասֆալտի ծածկույթի խորը ճաքերն անհնարին են դարձնում մասնակի վերանորոգման կամ փոսալցման եղանակով տվյալ հատվածի շահագործման պիտանելիության ժամկետի երկարաձգումը: Նման աշխատանքները կլինեն ֆինանսապես ոչ արդյունավետ և միջոցների զուր վատնում: Փողոցների մայթերն ու եզրաքարերը ևս գտնվում են անմխիթար վիճակում, բետոնե եզրաքարերն ամբողջովին քայքայված են, իսկ որոշ հատվածներում մայթերն իսպառ բացակայում են: Ուստի և անհրաժեշտ է իրականացնել դիտարկվող հատվածի ամբողջական հիմնանորոգում:

2022 թվականի նոյեմբերի 11-ին՝ Գյումրի համայնքի ավագանու 203-Ա որոշմամբ, որպես սեփական ներդրում հիմնանորոգման աշխատանքների հնարավոր մեկնարկի գործում, համայնքի բյուջեից հատկացվել է 15,000,000 (տասնհինգ միլիոն) Ա.Շիրակացի և Մ.Խորենացի փողոցների 2,440 (երկու հազար չորս հարյուր քառասուն) մետր հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերման համար: Ըստ նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ վերոնշված հատվածը հիմնանորոգելու

համար անհրաժեշտ է 1,146,333,800 (մեկ միլիարդ հարյուր քառասունվեց միլիոն երեք հարյուր երեսուն երեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ (հաշվարկված 2022 թվականի դրությամբ):

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով դիտարկվող հատվածի պետական նշանակության լինելը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին ակնկալում է Հայաստանի Հանրապետության կառավարության անմիջական և գործուն աջակցությունն ու ներգրավածությունը համայնքի և Հայաստանի Հանրապետության համար կարևորագույն նշանակություն ունեցող Ա.Շիրակացի և Մ.Խորենացի փողոցների հիմնանորոգման հարցում: